գործում, հովուական առաքելութեամբ տարբեր երկրներում դեգերող Մխիթարեան վարդապետներին[15]։

Մանկուց քաջածանօթ լինելով ակնագործութեանը եւ չնորհիւ իր բնածին աչքաբացութեանն ու ճարպկութեանը, 1742-1749 թթ., Յովհաննէս Թովմաճանեանը Կ. Պոլսում բացում է խանութ եւ աշխուժօրէն զբաղւում ակնավաճառութեամբ։ 1749-ից մինչեւ 1789 թթ. Թովմաճանեանը առեւտրական բազմաթիւ ճանապարհորդութիւններ է կատարում զանազան ուղղութիւններով։ Թովմաճանեանի կազմած եւ ստորեւ բերուող ցանկը (ձեռ. 1688, թթ. 257v-258r), կարծում ենք, լիակատար պատկերացում է տալիս միջազգային առեւտրական ճանապարհների վրա հայ ակնավաճառի անցած կեանքի ուղու մասին.

ԵՐԵՍՈՒՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԻՆՔՆԻՇԽԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ, ՅՈՐՍ ՇՐՋԵՑԱՒ ԶԵՐԻՍ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ ՏԷՐ ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎՀԱՆՆԷՍՆ ԱՅՍԻՆՔՆ ՅԵՒՐՈՊԻԱ, ՅԱՍԻԱ ԵՒ ԱՓՐԻԿԷ, ԶՈՐ ԿԱՐԳԵՄՔ ԱՍՏԱՆՕՐ ՍԿՍԵԱԼ ՆԱԽ Ի ՅԵՒՐՈՊԻՈՅ։

1. Կոստանդնուպոլիս, որ է թագաւորանիստ քաղաք օսմանցւոց յորում ծնաւ նա ինքն Թովմաճանն։
2. Ուլահու երկիրն իշխանութիւնք պօյարեաց երիցս անգամ։
3. Պուտիմ եւ Բեշտ թագաւորական քաղաք Մաճառի ի յորս է ի Թրանսիլվանեան Կերլէ եւ Պաշվալու Հայոց չորիցս անգամ։
4. Վիէննա կայսերանիստ քաղաք երիցս անգամ։

պոլսահայ հրատարակիչ Պօղոս Արապեանի անտիպ նամականին, ուր վերջինս հաղորդում է Ղալաթիայում Թովմաճանեանից գրքեր ձեռքբերելու (1781 թ.) մասին (Ս. Ղազար, ձեռ. թիւ 2690, թ. 3v)։

14 *1753 թ. Կ. Պոլսից Մխիթարեան վարդապետների նամակները վկայում են, որ Յովհաննէս Թովմաճանեանը շատ գործուն դեր ունեցաւ Պոլսում յայտնուած «Համատարած աշխարհացոյց»ի (Ամստերդամ, 1695) պղնձէ տախտակների ձեռքբերման եւ ապա Վենետիկում նոր տպագրութիւն պատուիրելու գործում (մանրամասն տե՛ս Հ. Սահակ Ճեմճեմեան, Քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ ԺԸ դարուն,* Վենետիկ-Ս. Ղազար, 1981, էջ 5-12)։

15 *Տե՛ս Հ. Պօղոս Մէհէրեանի 1773 թ. տեղեկատուութիւնը Եգիպտոսում Յովհաննէս Թովմաճանեանի կողմից իրենց նկատմամբ դրսեւորած վերաբերմունքի մասին (Ս. Ղազար, ձեռ. 560 (Գ բ), թթ. 55r-56r)։*